ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7—8, 1960 Общественные науки

Ա. Ս. Ղարիբյան

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԵՐՆ ՈՒ ՏԵՂԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՄԱՆ ԿԱՅՈՒՑՎԱԾՔԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՀԱՐՑԸ

Հնդեվրոպական նախալեզվի անունները բաղկացած էին երկու ձևույթներից՝ հիմքից և վերջավորությունից[1], *ըստ որում հիմքերը ևս երկու կարգի էին՝ թեմատիկ (ձայնավոր վերջավորությամբ) և աթեմատիկ (բաղաձայն և ձայնորդ վերջավորությամբ)*[2]*:*

Նման վիճակի մնացորդները կան միայն հնդարիական հին լեզուներում[3]*:*

Այս վիճակը ենթարկվեց փոփոխության հնդեվրոպական հին դասական լեզուներում (լատիներենում, հին հունարենում, հին գերմաներենում, հին սլավոներենում և այլն):

Այս փոփոխությունը դիպավ հիմքի վերջի ձայնավորին և վերջավորությանը, ըստ որում... «Հիմքի վերջի ձայնավորը և վերջավորությունը միաձուլվում էին խոսողների գիտակցության մեջ իբրև անբաժանելի մի ամբողջություն...»[4]*:*

Բոլոր դասական լեզուների մեջ, բացի սլավոնականից, հիմքի ձայնավորի միաձուլումը վերջավորության հետ վերացնում է հիմքի և վերջավորության միջև գիտակցվող սահմանը: Այդ լեզուներում այլևս գոյություն չուներ մի ձև, մի հիմք, որի վրա ավելանային վերջավորություններ՝ հոլովներ ստացվելու համար: Ուղղականն էլ աննունների ձևերից մեկն էր ու չէր կարող հոլովման ելակետային ձև համարվել[5]*:*

Այդ առիթով իտալական անվանի գիտնական Վիկտորիո Պիզանին բերում է հետևյալ օրինակը[6]*:*

Մինչլատիներենի հոլովում	Լատիներենի հոլովում
*lupo-s	lupus
*lupo-m	lupum
*lupōi...	lopō...

---

[1] *«Ձևույթ» ասելով մենք հասկանում ենք բառի յուրաքանչյուր մասը, որ որևէ նշանակություն ունի (արտահայտում է հիմնական կամ երկրորդական իմաստ, քերականական հարաբերություն և այլն):*

Հ. Եվ. բառի կազմության մասին Ա. Մեյեն ասում է «Հիմքը, արմատի և ածանցի բաժանվող կամ չբաժանվող, և վերջավորությունը հնդեվրոպական ձևաբանության էական տարրերն էին» A. Mene Введение в сравнительное изучение индоевропейских языков. *Ռուսերեն թարգմանություն. 1938 թ. էջ 170:*

[2] *Ա. Մեյե, նույն տեղը, էջ 200:*

[3] *Նույն տեղը, էջ 429,*

[4] *Նույն տեղը, էջ 430:*

[5] *Ա. Մեյե. նույն տեղը, էջ 429:*

[6] В. Пизани. Этимология. стр. 101. 1956 г.. Русск. перевод.

Սլավոնականում էլ կատարվեց հիմքի և վերջավորության միաձուլում, սակայն հիմքի ձայնավորը որոշակի միացավ վերջավորությանը և նրա հետ կազմեց մի նոր վերջավորություն:

«Սլավոնական հոլովման մեջ արդեն չկա ոչ հիմք, ոչ էլ ձևակազմիչ, այլ կա միայն «վերջավորություն», որ կազմված է հիմքից առնված տարրից և հին ձևակազմիչի մնացորդներից, որոնք բառավերջի հատուկ փոփոխությունների հետևանքով իրենք ևս խիստ փոփոխված էին»[1]:

Դրա մասին ամենալավ գաղափարը կարող է տալ ժամանակակից ռուսերենի ձայնավոր վերջավորություն ունեցող գոյականների հոլովումը:

Единствен. число	Множественное число
Им. Сел-о стен-а	сёл-а стен-ы
Р. сел-а стен-ы и т. д.	сел стен и т. д.

Ինչպես տեսնում ենք, село և стена բառերի հոլովման հիմքերն են сел և стен (դրանց հոգնակի սեռականը «մաքուր» հիմքի ձևեր են՝ զրկված հիմքի վերջի ձայնավորից):

Ուրեմն՝ սլավոնական լեզուների անունները մնացին երկձևություն և տարբերվեցին հնդեվրոպական նախալեզվից նրանով, որ հնդեվրոպական հիմքի վերջին ձայնավորը, պոկվելով նրանից, միացավ հին ձևակազմության մնացորդներին՝ նրա հետ միասին կազմելով նոր վերջավորություն:

Այսպիսով պատմահամեմատական լեզվաբանական գիտությունը հնդեվրոպական դասական լեզուների անունների կազմությունը բաժանում է երկու տիպի, որոնցից մեկը պայմանական կերպով անվանում ենք լատինական տիպ և մյուսը՝ սլավոնական տիպ: Առաջինը հիմքի վերջին ձայնավորը միացնելով հին ձևակազմական մասնիկներին, ջնջում է հիմքի և վերջավորության սահմանները, իսկ երկրորդը՝ պոկելով հիմքի վերջին ձայնավորը, միացնում է ձևակազմական մասնիկներին և կազմում է նոր վերջավորություն:

Երկրորդ տիպը, որի ներկայացուցիչները սլավոնական լեզուներն են, հիմքերի վերասերման էվոլյուցիայով ավելի առաջ է անցել, քան առաջին տիպը: Ինչպե՞ս է այդ կատարվել, արդյոք միանգամից, թե միջանկյալ փուլով:

Անունների կառուցվածքային այդ հարցի լուծումը ճշգրտում կմտցնի հնդեվրոպական լեզուների ձևաբանության զարգացման պատմության մեջ:

Այդ տեսակետից հայերենը ներկայացնում է մի նորություն, որը կարող է որոշ չափով լույս սփռել հարցի պարզաբանման վրա:

Հայերեն լեզուն մեր դարաշրջանի 5-րդ դարի վկայված օրինակով՝ գրաբարով, ցույց է տալիս, որ դասական լեզուների անվանական կառուցվածքի մեջ կա մի երրորդ տիպ, որը տարբեր է թե՛ լատինական և թե՛ սլավոնական տիպերից:

Այն էլ ասենք, որ առաջին երկու տիպերի լեզուները պահպանում են հնդեվրոպական նախամայր լեզվի մի հատկությունը. նրանք, չնայած բառի վերջավորության մեջ կատարված փոփոխություններին, պահպանել են բառի վերջավորության գիտակցումը և դրա հետևանքով պահպանել են սեռի, հոլովման տիպի, թվի գաղափարները ուղղական ձևի մեջ:

Հայերեն լեզուն, ինչպես ապացուցել է լեզվաբանությունը[8], կորցրել է

[1] А. Мейе. Общеславянский язык, стр. 308, 1951 г., русск. перевод.

[8] A. Meillet· Esquisse cd'une grammaire compare'e de l'Arme'nien classiqne, 1936, 2-me edit.

անունների վերջին վանկը և դրա հետևանքով կորցրել է անվան ուղղական ձևի վերջավորության գիտակցումը և բոլոր այն քերականական գաղափարները, որոնք ամփոփված էին այդ վերջին վանկում։

Կորցնելով վերջին վանկը, հայերենի անունները ուղղական ձևում վերածվել են «մաքուր» հիմքի, որի վրա վերջավորություններ ավելացնելով՝ կարելի է ստանալ զանազան հոլովներ։

Օրինակի համար վերցնենք երեք անուն, որոնք ունեն առաջնալեզվային բաղաձայն վերջավորություն. նետ, կետ, զարդ։ Դրանց գործիականը կլինի՝ նետիւ, գետով, զարդու։

Առաջին տպավորությունից կարելի է եզրակացնել, որ գործիական հոլով ստանալու համար նետ ուղղականին ավելացվել են «իւ», գետ բառին՝ «ով», և զարդ բառին «ու» վերջավորությունները։

Ինչպես հայտնի է, հնդեվրոպական այլ լեզուներում (և առաջին և երկրորդ տիպերի) այդպես չեն վարվում։

Որևէ այլ հոլով ստանալու համար ուղղական ձևի վերջավորությունը դեն է գցվում և տեղը դրվում է համապատասխան հոլովի վերջավորությունը (сел-о, сел-а և այլն)։

Բայց հայերենում նկատելի է մի այլ երևույթ ևս, որը շատ կարևոր է հնդեվրոպական լեզուների անունների կառուցվածքի էվոլյուցիան հասկանալու համար։

Նետ-իւ, գետ-ով և զարդ-ու գործիական ձևերի մեջ նկատում ենք վերջավորությունների երկու տարբ. դրանցից վերջինը միևնույն վերջավորության կամ, ինչպես ասում ենք, հոլովակազմիչի տարբերակներն են (ւ, վ)։

Այսպիսով գրաբարի անվան յուրաքանչյուր հոլովը կարող է ունենալ վերջավորություն, որ կոչում ենք հոլովակազմիչ։

Եթե այդ հոլովակազմիչը հանենք, մնում են նրանց նախորդող ի և ո (նաև ա) ձայնավորները և ու երկբարբառը։

Այդ ձայնավորները և երկբարբառը գրաբարում ունեն հոլովման տիպ ցույց տալու ֆունկցիա, հոլովման ցուցիչներ են։ Այդ ֆունկցիան նրանք պահպանում են հոլովներում, ուստի այդ ձայնավորները չեն կապվում ոչ մի հոլովի հետ առանձին։ Առաջանալով սեռակառում, նրանք պահպանվում են բոլոր հոլովներում (բացի հնչյունափոխության դեպքերից)։ Նրանք չեն կապվում նաև որևէ հոլովակազմիչի հետ, ուստի նրանք միայն թեքման նշաններ են։ Օրինակ՝ բան, բան-ի-ւ, գետ, գետ-ո-յ, գետ-ո-վ, Արշակ, Արշակ-ա-յ Արշակ-ա-ւ։

Լեզվաբանական գիտությունը ցույց է տվել, որ հոլոլովիչներն առաջացել են հնդեվրոպական անունների թեմատիկ ձայնավորներից[9]։

Հետևաբար գրաբար լեզուն, ի տարբերություն բոլոր այլ հ.-ե. լեզուների, հիմքի վերջի ձայնավորը պոկել է նրանից և չի միացրել հին վերջավորությանը, այլ պահպանել է անկախ վիճակում, նրան տվել նոր հոլովիչի իմաստ, ստեղծել նրանցից մի նոր անկախ ձևույթ, բռնելով միջին տեղը լատինական և սլավոնական տիպերի միջև։ Դրանով գրաբարը հ.-ե. լեզուների սիստեմում բռնում է ինքնուրույն տեղ և բացատրում հ.-ե. անունների կառուցվածքային զարգացման պրոցեսը։

Այդ հանգամանքը գրաբար լեզվի անունների կառուցվածքի համար ու-

[9] A. Meillet, ibid.

նեցավ մեծ հետևանքներ և նրան մի շարք գծերով տարբերեց հնդեվրոպական այլ լեզուներից։ Հոլովիչի իբրև անկախ ձևույթի գիտակցումը առաջացրեց հայերենում արտաքին և ներքին թեքման երևույթները, որ համարյա չկան հնդեվրոպական լեզուների մեջ։ Այսպես՝ ձայնորդ վերջավորություն ունեցող անուններում հոլովիչը երևում է հիմքի ներսում, քանի որ այդ անունների մեջ թեմատիկ ձայնավորներ չկան. օրինակ. տուն-տան-տամբ, աստղ-աստեղ-աստեղբ, այր, առն, առնբ։

Ինչպես կարելի է հեշտությամբ նկատել, տամ-բ, աստեղ-բ, առն-բ ձևերի մեջ ա, ե, ու ձայնավորները իբրև հոլովիչներ հակադրվում են բ ընդհանուր հոլովակազմիչին և դրանով ստեղծում ներքին թեքում։

Ներքին թեքման առկայությունը հակադիր է դարձնում նրան՝ բան-ի-ւ, գետ-ո-վ, Արշակ-ա-ւ ձևերին և ստեղծում արտաքին թեքման իրակությունը։

Երբ բառի մեջ երևում են թեքման երկու նշաններ, ինչպես օրինակ, անձն>անձին>անձամբ, բարձր>բարձու>բարձամբ, գինի>գինւոյ>գինեաւ, այդ երևույթը հակադրվում է թեքման միայն մեկ նշան ունեցող հոլովման (գետ>գետոյ>գետով, բան>բանի>բան-իւ) և առաջացնում պարզ հոլովման և խառը հոլովման երևույթները[10]։ Այսպիսով՝ թեմատիկ ձայնավորի իմաստավորումը իբրև թեքման նշանի՝ հոլովիչի, գրաբարի մեջ առաջացնում է պարզ ու խառը տիպերի հոլովման կառուցվածքային երևույթները, որ գոյություն չունեն այլ հ-ե. լեզուների մեջ։

Գրաբարի կառուցվածքի զարգացումը գնաց դեպի [illegible] տիպը, քանի որ հոլովիչը միացավ հոլովական վերջավորության, որի հետ զուգահեռաբար կորավ հոլովիչի որպես անկախ ձևույթի գիտակցումը և ստացվեց.

նետ-ից, գետ-ից, զարդ-ից. նետ-ով, գետ-ով, զարդ-ով. նետ-ում, գետ-ում, զարդ-ում։

Այդ պրոցեսի հետևանքը եղավ ներքին և արտաքին թեքման, պարզ և խառը տիպերի հոլովման գաղափարների ջնջումը, որից և ստացվեց աշխարհաբարի հոլովման ներկա կառուցվածքը։ Հնդեվրոպական անվանական հոլովման կառուցվածքի էվոլյուցիան, ի վերջո, ամեն տեղ հանգեց այս վիճակին, իսկ որոշ լեզուների մեջ էլ բոլորովին վերացրեց հոլովումը (իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն և այլն)։ Առաջին և վերջին փուլի վկայությունները հնդեվրոպական լեզուներում կան։ Միջին փուլի միակ վկան առայժմ գրաբար լեզուն է, այդ պատճառով նրա դերը հնդեվրոպական լեզուների համակարգում առանձնակի նշանակություն է ստանում։

2. ԲԱՂԱՁԱՅՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԸ

Հնդեվրոպական համեմատական լեզվաբանությունը սկզբից հանգեց այն եզրակացության, որ հիմք-լեզվի մեջ գոյություն ունեին պայթական հնչյունների չորս շարք, այն է.

bh b p ph dh d t th gh g k kh

Այդ եզրակացությունը թելադրվում էր նրանով, որ վեդական (երկրորդ հազարամյակ մ. դ. ա.) և սանսկրիտի (առաջին հազարամյակ մ. դ. ա.) տեքստերում գոյություն ունեին bh, dh, gh շնչեղ ձայնեղ հնչյունների գրավոր ֆիքսացիան։ Նրանք կան այժմյան հնդարիական լեզուներում։

[10] Խառը հոլովումը արտացոլում է հ.-ե. ձայնդարձի երևույթը. տես՝ A. Meillet, Esquisse...

Այս եղակետով էլ կատարվել են ստուգաբանություններ հարյուր տարվա ընթացքում. ստեղծվել խոր և լուրջ ուսումնասիրություններ, մոնումենտալ գործեր. հսկայական գիտական գրականություն:

Սակայն 20-րդ դարի մի շարք լեզվաբաններ կասկածի տակ են դնում շնչեղ ձայնեղների bh, dh, gh եղած լինելը նախամայր լեզվում, քանի որ դրանք վկայված են միայն հնդարիական ճյուղի լեզուներում:

Այդ դեպքում կասկածի տակ են դրվում այն բոլոր հետազոտությունների և եզրակացությունների զգալի մասը, որոնք կատարվել են վերոհիշյալ 100 տարվա ընթացքում:

Սակայն, պատմահամեմատական լեզվաբանության մեջ ընդունված է հետևյալ կանոնը. եթե միևնույն երևույթի մասին վկայում են՝ երկու տարբեր ճյուղերի լեզուներ, ապա այդ երևույթը ժառանգված է նախամայր լեզվից, ուրեմն և գոյություն է ունեցել հիմք-լեզվի մեջ: Այդ պատճառով էլ իրավացի կարող էին լինել այն գիտնականները, որոնք ժխտում էին շնչեղ ձայնեղների գոյություն ունեցած լինելը հնդեվրոպական նախալեզվում, որովհետև բացի հնդարիական ճյուղից, ուրիշ որևէ ճյուղ այդ մասին չէր վկայում:

Հայերեն լեզվի փաստերը, սակայն, թելադրում են հակառակը:

Հայերեն լեզվի. որպես հնդեվրոպական լեզվի, պայթական բաղաձայնների մասին կարծիք ստեղծվեց, որ նա առաջացել է հնդեվրոպական բաղաձայնական համակարգի մեկ լրիվ տեղաշարժով շնչեղ ձայնեղներից դեպի աջ[11]:

Այսպես՝ bh b p ph dh d t th gh g k kh

բ պ փ դ տ թ գ կ ք

Այդպես էր կարծիքը, որովհետև նկատի էր առնվում գրաբարի բաղաձայնական համակարգը, որի պատկերն հետևյալն է.

b p ph բ պ փ d t th դ տ թ g k kh գ կ ք

Սակայն մենք փորձեցինք խմբավորել հայ բարբառների բաղաձայնների համակարգը, և դրանից ստացվեցին 7 խմբեր, որոնք են.

Փոքր Հայքի	Մեծ Հայքի[12]	Գրաբարակերպ
կամ 1-ին խումբ	կամ 2-րդ խումբ	կամ 6-րդ խումբ
dh d—th և այլն	dh — t th	d t th
Անտիոքի	Փոքր Ասիական	Հյուսիսային միջա-
կամ 4-րդ խումբ[13]	կամ 6-րդ խումբ[11]	գետքի կամ 5-րդ խումբ[15]
d t th	d — th	d -th

Արևելյան բարբառների կամ 7-րդ խումբ. t th

Նկատելով, որ հայոց լեզվի պատմության մեջ ամենակայուն հնչյուն-ները հնդեվրոպական ձայնեղներն են և ամենաշատ փոփոխվողները հնդեվրո-

[11] Մասնակի հնչյունափոխությունները նկատի չենք առնում:

[12] Այս խմբի ձայնեղները կան միայն բառամիջում, իսկ բառասկզբում առկա են խուլեր միայն:

[13] Այս խմբում հ.—ե. շնչեղ ձայնեղները վերածվում են խուլերի, ձայնեղները պահպանվում են

[14] Այս խմբում հ. ե. շնչեղ ձայնեղները վերածվում են ձայնեղի, հ.—ե. ձայնեղները պահպանվում են:

[15] Այս խմբում հ. ե. շնչեղ ձայնեղները վերածվում են շնչեղ խուլի, իսկ հ. ե. ձայնեղները պահպանվում են:

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ... ՄԵՆՏԵՆ ... ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

պական շնչեղ ձայնեղները (bh, dh, gh), մենք եզրակացրինք, որ դրանք և ընդհանրապես բարբառների բաղաձայնական համակարգը, բացառությամբ 3-րդ և 7-րդ խմբերի, նախամայր վիճակի արտացոլումներն են, առաջացել են հայոց լեզվի զարգացման այն փուլից, երբ նրա մեջ լրիվ անդաշարժներ չէին կատարվել և նրա համակարգում գոյություն ունեին հնդեվրոպական շնչեղ ձայնեղները: Մեր ենթադրությամբ դրանք կարող էին լինել մեր դարաշրջանից առաջ, II հազարամյակի վերջերին և I հազարամյակի ընթացքում:

Եթե այդպես է, ապա հայերեն լեզուն իր բարբառների շնորհիվ դառնում է այն երկրորդ լեզուն, որ հնդարիական ճյուղի կողքին վկայում է, թե նախամայր լեզուն ունեցել է շնչեղ ձայնեղների խումբը:

Դրանով լուծվում է դարավոր պրոբլեմը, արդարանում է 100 տարվա ենթադրությունը, որի վրա կառուցված են այդ 100 տարվա ստուգաբանությունները:

Դրանով հայ բարբառները մեծ ծառայություն են մատուցում հնդեվրոպական համեմատական լեզվաբանությանը իբրև մի իսկական գյուտ[16]:

Կան գիտնականներ, սոլիդ հայագետներ, որոնք հակառակ կարծիքի են և ջանում են ապացուցելու, թե այդ երևույթները մեր հազարամյակում առաջացած երևույթներ են, իբր, հայերեն լեզվի բարբառների առաջացման պրոցեսում, որ նրանք դնում են մեր հազարամյակում, 10-րդ դարից հետո: Եթե, իրոք, այդ կարծիքի կողմնակիցներին հաջողվի ապացուցել այդ, ապա հայերեն լեզվի բարբառները իրենց այդ երևույթով հնդեվրոպական համեմատական լեզվաբանության համար մի առանձին արժեք չեն ներկայացնի: Այստեղ բախվում են երկու ելակետային սկզբունքներ: Մեկը մեր ելակետն է, ըստ որի հայերենի ժամանակակից բարբառների ծագումը պետք է որոնել խոր հնության մեջ 5-րդ դարից 1000 տարիներ առաջ, կապելով պատմական Հայաստանի ցեղատոհմական ժամանակաշրջանի կեցության հետ: Փաստերը վկայում են, թե ընդհանուր լեզվի՝ գրաբարի, կողքին վաղուց ի վեր գոյություն են ունեցել հայերենի բարբառները, ուրեմն նաև նրանց բաղաձայնական համակարգերը, որոնք գրաբարի հետ միասին առաջացել են հայերենի ավելի հին վիճակից, քան 5-րդ դարի գրաբար լեզուն է:

Դեռ 19-րդ դարի վերջին Sivers-ը Աշտարակի խոսվածքի ուսումնասիրությամբ, ապա Հ. Աճառյանը էքսպերիմենտալ ճանապարհով, 1953 թ. W. S. Allen-ը նոր Զուղայի բարբառի ուսումնասիրությամբ հաստատեցին, որ հայ բարբառների մի մասը ունի շնչեղ ձայնեղների շարքը (bh, dh, gn, ih, jh): H. Pedersen-ը դեռ 1904 թվականին արտահայտել է այն կարծիքը, թե գրաբար լեզվի բ, գ, դ, ձ, ջ գրերը արտահայտում են ոչ թե ձայնեղ հնչյուններ, այլ շնչեղ ձայնեղ հնչյուններ: Նույն կարծիքին է հանգել մեծագույն հայագետ A. Meillet 1920 թվ.: Այդ կարծիքին է հանգել Hans Vogt-ը 1958 թվ.: Այդ ամենը նկատի ունենալով, քննելով հարցն ըստ էության, խոշոր լեզվաբան E. Benvenist-ը գտնում է, որ հայերենի «...շնչեղ ձայնեղները նորագոյացության արդյունք չեն: Ընդհակառակը, նրանք ժառանգված մի շարք բնորոշ գծերն են ի հայտ բերում... Ինչպես ժամանակից արևելահայերենում (երևի հասկանալով Արալատյան բարբառը—Դ.), այնպես էլ հին հայերենում

[16] Մեր այս առաջարկը գրական լայն ընդունելություն գտավ հնդեվրոպական պատմա-համեմատական լեզվաբանական խոշոր ներկայացուցիչների կողմից. օրինակը տես՝ Вопросы языкознания, 1959 г. № 6.

երրորդ շարքի պայթականներն ու աֆրիկաները շնչող ձայնեղներ էին (ընդգծումը հեղինակին է — Ռ.) և ոչ թե պարզ ձայնեղներ»[17]

Մենք մտադիր չենք հերքելու այս դրույթը, ավելի շատ հակված ենք ընդունելու դա և այդ դեպքում դրաբարի համակարգը կնդունի այս պատկերը։

bh—p ph dh—t th gh—k kh jh—c—ç jh—c

Դրանով դրաբարը իր բաղաձայնական համակարգով խիստ կմոտենա Փոքր Հայքի և Մեծ Հայքի բարբառներին և կճշտվի այն տեսակետը, թե բարբառները և դրաբարը բաղաձայնական համակարգով միմյանցից բնավ հեռու չեն կանգած և շարունակում են հնդեվրոպական նախամայր լեզվի բաղաձայնական համակարգի էվոլյուցիան։ Դա, ի հարկե, մեր այն կարծիքի վրա, թե մեր բարբառների համակարգը առաջացել է 5-րդ դարից դեռ շատ ավելի առաջ և այն վիճակից, որ նա ունեցել է առաջին կիսամյակում մ. դ. ա., նոր ոչինչ չի ավելացնում, բացի այն, որ դրաբարն էլ դառնում է վկա, որ մեր հիմնական բարբառները առաջացել են հայերենի ընդհանուր լեզվից՝ ճյուղավորվելով շատ հին ժամանակներում, մի հազարամյակով առնվազն ավելի վաղ, քան մեր 5-րդ դարը։

Միաժամանակ մենք է՛լ ավելի համոզվում ենք, որ մեր բարբառները հնդարիական լեզուների կողքին հայերենը դարձնում են այն երկրորդ ճյուղը, որ վկայում է շնչող ձայնեղների եղած լինելը հնդեվրոպական հիմնալեզվի մեջ։

А. С. Гарибян

Место и рол Армянского языка в системе индоевропейских языков

Резюме

Автор рассматривает структурное развитие и.-е. имен и приходит к заключению, что древнеармянские имена в отличие от имен других древних индоевропейских языков представляют особый тип, в котором обособленно осознаются основа, признаки типов склонения, происшедшие от и.-е. тематических гласны и окончания. Пример: get-река: get-o-v рекой; ban-славо: ban-i-w славом. На этой почве возникли типы склонения внутренней и внешней флексии в древне-армянском языке. Таким образом древне-армянский язык уточняет пути развития именного склонения индоевропейских языков.

Во второй части статьи автор рассматривает консонантную систему диалектов армянского языка и находит в них семь груп: I-dh d-th; II-dh-t th; III-d-th; IV-d-t th V-d-th; VI-d t th; VII-t th. Соглашаясь с мнением Педерсена, Мейе и Бенвениста, автор считает что древнеармянские звонкие взрывные на самом деле носили характер

[17] Հարցի մանրամասն քննությունը տես՝ E. Benveniste, sur la phonetique et syntaxe de l'Armenien classique. Bulletin de la Société de linguistique de Paris. T. 54, Fasc 1, 1959.

звонких придыхательных согласных, которые сохранились в тринадцати диалектах армянского языка, занимающих территорию Малой и Великой Армении. Звонкие придыхательные, как известно, имеются лишь в индоарийских языках. После обнаружения этих звуков в армяноком языке, не остается сомнения в том, что эти звуки явились характерным качеством индо-европейского консонантизма.

A. S. Garibian

The Place and the Role of Armenian Language in the System of Indo-European Langages

Summary

The author takes the structural development of I.—E. nouns under his review and comes to the conclusion that the nouns of Ancient Armenian in contrast to the nouns of other Indo-European languages represent a special type, in which are realized apart the stem, the indices of the type of declination arisen from fhe I.—E. thematical vowels and the ending. An example: get—river; get-o-v-by the river.

ban—word; ban-iw-by the word.

On this ground arose the types of internal and external inflexion of declination in the Ancient Armenian language. Thus the Ancient Aamenian language makes more exast the ways of development of noun declination of Indo-European languages.

In the second part of the article the author takes under his review the consonantal system of dialects of Armenian language and finds in them seven groups:

I—dhd—th; II—dh—t th; III—d—th; IV—d t th; V—d—th; VI—d t th; VII—t th.

The author agreeing with the opinion of Pedersen, Meillet and Benveniste considers that the Ancient Armenian voiced plosives actually hed been of a voiced aspirate character consonants, which remained in thirteen dialects of Armenian language, occupying the territory of the Minor and the Great Armenia. The voiced aspirates, as it is known are only in the Indo-Aryan languages. After heving discovered these sounds in the Armenian language there remains no doubt about the fact, that these sound were the characteristic quality of the Indo-European consonantism.